ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 06.04.2017թ.-ի N 51-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 21.04.2017թ. ժամը 15[00]

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 06.04.2017թ-ի N 51- Լ հրամանի հիման վրա պարզեցված ընթացակարգով էլեկտրական սարքերի և պահեստամասերի ձեռք բերում, ծածկագիր՝ «ԲԷՑ–ՊԸԱՊՁԲ-17/18»

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝

Ալիսա Բաղդասարյան ֆինանսատնտեսագիտական և մատակարարման հարցերով տնօրեն

Անդամներ՝

Միշա Բաղրամյան գլխավոր տնօրենի խորհրդական

Հարություն Գևորգյան մատակարարման բաժնի պետի տեղակալ

Արսեն Հարությունյան ռելեական պաշտպանության և բարձրավոլտ փորձարկումների ծառայության պետ

Լևոն Ադամյան էլ. ցանցերի շահագործման ծառայության պետ

Քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան մատակարարման բաժնի պետ

I. Հայտերի բացման մասին

(Ա.Բաղդասարյան)

1. Հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1. «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ-ն՝ 21.04.2017թ, իրավաբանական հասցե՝ ք. Երևան Կոմիտասի պ.,59/7 բն.12

2. Մասնակցի ներկայացրած ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

3.Մասնակիցը գնային առաջարկ է ներկայացրել միայն 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար.

գնային առաջարկ առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)			
Հ/Բ	Գնման առարկայի անվանումը	Քանակ հատ	«Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ արժեք
3	Փոխակերպիչ – REPEATER RD 48 LV	5	1625000
4	Փոխակերպիչ – REPEATER RD 48 HV	5	1625000
5	Փոխակերպիչի կոմուտացիոն բլոկ STS207-230HV	1	2562500

4.Մասնակցի հայտը համապատասխանում է ընթացակարգի հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:

5. Հանձնաժողովը որոշեց.

5.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

5.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:

5.3 Գնահատման արդյունքում գնման ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Զավեն Եղիազարյան Սերյոժայի» ԱՁ-ն:

5.4 Հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

5.5 Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու հայտով ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը և մասնագիտական փորձառության հավաստող փաստաթուղթերը:

5.6 Հանձնաժողովի հաջորդ նիստ գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացություն ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 14:00-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ալիսա Բաղդասարյան

Միշա Բաղրամյան

Հարություն Գևորգյան

Արսեն Հարությունյան

Լևոն Ադամյան

Ռոմեո Ալբերտյան